«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 11
30.06.2023թ.

1. ՀԱԱՀ ՈՒԳԸ աշխատանքների կատարման ընթացքի և խնդիրների վերաբերյալ.

1.1. Ընդունել ի գիտություն:

1.2. Հանձնարարել ՈՒԳԸ նախագահ Զ. Հովեյանին՝ 2023-2024 ուսատարվա աշնանային արձակուրդի ընթացքում վարժարանի աշակերտների և քոլեջի ուսանողների համար կազմակերպել գիտական նախագծերի պիլոտային ցուցադրություն:

1.3. Հանձնարարել դեկաններին, ՈՒԳԸ նախագահ Զ. Հովեյանին, ՀԱԱՀ ինկուբատորների ղեկավարներին՝ ՀԱԱՀ տարբեր ստորաբաժանումների, ՈՒԳԸ լավագույն ուսանողներին ներգրավել նորարարական գաղափարներ ու ստարտափ նախագծեր մշակող թիմային աշխատանքներում:

2. Պարենամթերքի տեխնոլոգիաների, Ագրոնոմիական և Ագրարային ճարտարագիտության ֆալուլտետներում ուսումնամեթոդական և գիտական աշխատանքների կատարման ընթացքի, նյութատեխնիկական ապահովվածության ու խնդիրների վերաբերյալ.

2.1. Հանձնարարել պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի դեկան Ս. Դավեյանին.

- մինչև սույն թվականի հուլիսի 7-ը ներկայացնել պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետին կից ստեղծվող արդյունաբերական խորհրդի անդամների ցուցակը,
- վիրտուալ լաբորատորիաների ձեռքբերման հարցը քննարկել ՈԳԱԿ որակի կառավարման բաժնի վարիչ Ա. Ամիրյանի հետ ու ներկայացնել առաջարկություններ:

2.2. Հանձնարարել ագրոնոմիական ֆակուլտետի դեկան Ա. Տեր-Գրիգորյանին՝ համալսարանի նորաստեղծ ենթակառուցվածների (լաբորատորիաներ, ջերմատուն, ՈւՓՏ-ր) հնարավորություններն ավելի մեծ չափով օգտագործել ավարտական աշխատանքներ կատարելու համար:

2.3. Հանձնարարել բուսաբուծության և հողագիտության ամբիոնի վարիչ Գ. Թովմասյանին՝ Ոսկեհատի տնտեսությունում կազմակերպել ցուցադրական դաշտային օրեր ֆերմերների համար՝ ներկայացնելով տնտեսությունում ներդրված նորագույն տեխնոլոգիաները:

2.4. Հանձնարարել ՏՏ կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին՝ ագրոնոմիական և անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետների

արդյունաբերական խորհուրդների կազմերի վերաբերյալ տեղեկատվությունը սեղմ ժամկետում տեղադրել ֆակուլտետների էջերում:

2.5. Հանձնարարել տնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Հովհաննիսյանին, ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի դեկան Ա. Սիմոնյանին, գյուղատնտեսական մեքենաշինության, ավտոմատացման և տեխնիկայի շահագործման ամբիոնի դոցենտ Ա. Ալթունյանին՝ քննարկել և սեղմ ժամկետում ներկայացնել առաջարկություն նոր ռոբոտների, հաստոցների, սարքավորումների, նյութատեխնիկական այլ ռեսուրսների ձեռքբերման և համապատասխան տարածքների ընտրության վերաբերյալ:

3. Համալսարանում կրթության որակի ապահովման և վերահսկման ընթացքի, բարելավման ուղիների վերաբերյալ.

3.1. Ընդունել ի գիտութուն:

3.2. Հանձնարարել դեկաններին՝ 2023-2024 ուստարվանն ընդառաջ վերանայել ու բարելավել ՄԿԾ-ը:

3.3. Հանձնարարել իրավաբանական բաժնի վարիչ Մ. Վարդանյանին, ՈՒԳԿՎ պետ Ա. Աղասարյանին՝ ուսումնասիրել և վերանայել համալսարանում գործող կարգերն ու կանոնակարգերը:

3.4. Հանձնարարել ստորաբաժանումների ղեկավարներին՝ բարձրաց-նել աշխատակիցների և ուսանողների իրազեկման մակարդակը համալսարանում տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ:

3.5. Հանձնարարել միջազգային կապերի և կրթական բարեփոխումների աշխատանքների գծով պրոռեկտոր Մ. Մովսիսյանին և ՈԳԱԿ տնօրեն Լ. Զաքարյանին՝ 2023-2024 ուստարվանն ընդառաջ ներկայացնել համալսարանի բարեփոխումների հաստատված պլանի լրամշակված տերբերակը:

4. ՀԱԱՀ ստորաբաժանումների կողմից համալսարանի մեթոդական խորհրդի քննարկմանը ներկայացվող մենագրությունների, դասագրքերի, ուսումնակա-ուսումնամեթոդական ձեռնարկների, մեթոդական ցուցումների և ուղեցույցերի ներկայացման ժամկետի հարցի վերաբերյալ.

4.1. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ 2023թ-ի սեպտեմբեր ամսին ամբիոններում քննարկել, գնահատել և ներկայացնել ուսանողների համար անհրաժեշտ մեթոդական աշխատանքների, ուղեցույցների, ուսումնամեթոդական և այլ ձեռնարկների կարիքները՝ նշելով առաջնահերթ կարևորություն ունեցողները:

4.2. Հանձնարարել ֆակուլտետային մեթոդական խորհուրդներին՝ իրենց հանձնարարված աշխատանքին վերաբերվել բարձր պատասխանատվությամբ:

4.3. ՀԱԱՀ Մեթոդական խորհրդի նիստերը գումարել մարտ, հունիս, սեպտեմբեր և դեկտեմբեր ամիսներին: Մեթոդական խորհրդի նիստի ընթացքում քննարկել միայն այն աշխատանքները, որոնք ներկայացված կլինեն մինչև նիստ գումարելու ամսվա 10-

ն ընկած ժամանակահատվածում (մարտի 10, հունիսի 10, սեպտեմբերի 10 դեկտեմբերի 10):

5. ՀԱԱՀ մեթոդական խորհրդի հավանությանն արժանացած ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկների, մենագրության հաստատման հարցի վերաբերյալ.

Հրատարակման երաշխավորել հետևյալ աշխատանքները.

5.1. Ընդհանուր քիմիա» (մաս 1-ին) ուսումնամեթոդական ձեռնարկ՝ նախատեսված ուսանողների լաբորատոր-գործնական պարապմունքների համար (հեղինակ՝ Լ.Ռ. Հարությունյան):

5.2. «Նուկլեինաթթուների հետազոտման մեթոդները և տեխնոլոգիաները» ուսումնական ձեռնարկ (հեղինակներ՝ Լ.Մ. Մելքոնյան, Ի.Ռ. Մովսիսյան, Մ.Վ. Վարդանյան):

5.3. «Հողի մշակման էներգախնայող տեխնոլոգիայի և համապիտանի ագրեգատի մշակում» մենագրություն (հեղինակ՝ Պ. Տոնապետյան):

6. Մասնագիտական կրթական ծրագրերի, ուսումնական պլանների, ինչպես նաև դրանցում առաջարկվող փոփոխությունների հաստատման հարցի վերաբերյալ.

6.1. Հաստատել ՀԱԱՀ Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի 031802.007 Ագրոէկոնոմիկա մասնագիտության, 031802.04.7 «Ագրարային մենջմենթ» միջազգային մագիստրոսական մասնագիտական կրթական ծրագիրը:

6.2. Հաստատել մագիստրոսական կրթության 081101.00.7 «Ագրոնոմիա» մասնագիտության 081101.04.7 «Օրգանական գյուղատնտեսություն» կրթական ծրագրի ուսումնական պլանում առաջարկվող հետևյալ փոփոխությունները՝

- Մագիստրոսական կրթության 081101.00.7 «Ագրոնոմիա» մասնագիտության 081101.04.7 «Օրգանական գյուղատնտեսութ-յուն» մասնագիտական կրթական ծրագրի ուսումնական պլանում ուսուցման նորմատիվային ժամկետը 2 տարուց դարձնել 1 տարի 6 ամիս, կրեդիտների թիվը 120-ից դարձնելով 90 կրեդիտ,
- գիտահետազոտական պրակտիկայի տևողությունը 10 շաբաթից դարձնել 8 շաբաթ, համապատասխանաբար՝ 12 կրեդիտի փոխարեն հատկացնելով 8-ը,
- մագիստրոսական ատենախոսության պաշտպանությանը 25 կրեդիտի փոխարեն հատկացնել 10 կրեդիտ:

6.3. Հաստատել մագիստրոսական կրթության 0831 «Ձկնային տնտեսություն» մասնագիտության, 083101.00.7 «Ձկնային տնտեսություն» մասնագիտական կրթական ծրագիրը:

7. Մասնագիտական կրթական ծրագրում և ուսումնական պլաններում առաջարկվող փոփոխությունների հաստատման հարցի վերաբերյալ.

Հաստատել առաջարկվող հետևյալ փոփոխությունները (Հիմք՝ ՀԱԱՀ մեթոդական խորհրդի քաղվածքը, ֆակուլտետային մեթոդխորհուրդների առաջարկությունները).

7.1. 072101.01.6 «Պարենամթերքի տեխնոլոգիա» կրթական ծրագրում «Արտադրական գործընթացի սպասարկում» առարկան ներկայացնել որպես պարտադիր, բայց, մասնագիտացումներից ելնելով, տարբերվող

բովանդակություններով դասավանդվող առարկա՝ նույն կիսամյակում, նույն կրեդիտով,

7.2. 072101.09.6 «Սննդամթերքի անվտանգություն» կրթական ծրագրի բարելավված ուսումնական պլանը՝ հետևյալ փոփոխություններով.

- նախկինում երկու կիսամյակով դասավանդվող «Պարենային օրենսդրություն» առարկան դասավանդել 3-րդ կիսամյակում, իսկ 5 կրեդիտի փոխարեն հատկացնել 6 կրեդիտ,

- «Կենսաքիմիա» և «Մանրէաբանություն» առարկաները վերանվանել «Սննդի կենսաքիմիա», «Սննդի մանրէաբանություն»,

- «Ջերմային պրոցեսներ» առարկան նույն՝ 5 կրեդիտով 4-րդ կիսամյակից տեղափոխել 3-րդ կիսամյակ,

- 4-րդ կիսամյակում «Սննդամթերքի պահպանման տեխնոլոգիա» առարկան բաժանել 2 մասի՝ վերանվանելով «Կենդանական ծագման հումքի վերամշակման և պահպանման տեխնոլոգիա» (հատկացնելով 6 կրեդիտ) և «Բուսական ծագման հումքի վերամշակման և պահպանման տեխնոլոգիա» (հատկացնելով 6 կրեդիտ),

- 4-րդ կիսամյակում ավելացնել «Սննդի քիմիա» առարկան՝ հատկացնելով 6 կրեդիտ,

- 5-րդ կիսամյակում «Կենդանական ծագման մթերքների տեխնոլոգիա» և «Բուսական ծագման մթերքների տեխնոլոգիա» առարկաները վերանվանել «Կենդանական ծագման մթերքի արտադրության և պահպանման տեխնոլոգիա» և «Բուսական ծագման մթերքի արտադրության և պահպանման տեխնոլոգիա»,

- 6-րդ կիսամյակում «Սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգեր» առարկան վերանվանել «Սննդամթերքի արտադրությունում որակի կառավարման համակարգեր»,

- 6-րդ կիսամյակում «Ռիսկերի վերլուծություն» առարկան վերանվանել «Սննդի շղթայում վտանգների վերլուծություն և կառավարում»:

7.3. «Բույսերի կենսաքիմիա» առարկան ընդգրկել 081101.00.6 «Ագրոնոմիա» մասնագիտության 081101.01.6 «Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա», 081101.02.6 «Բույսերի պաշտպանություն», 081101.03.6 «Պաշտպանված գրունտի տեխնոլոգիա», ինչպես նաև 052201.006 «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտության՝ 052201.02.6 «Ագրոէկոլոգիա» կրթական ծրագրերում: «Բույսերի ֆիզիոլոգիա կենսաքիմիայի հիմունքներով» (6 կրեդիտ) առարկան բաժանել «Բույսերի ֆիզիոլոգիա» (4 կրեդիտ՝ 64 լսարանային և 56 արտալսարանային ժամաքանակ) և «Բույսերի կենսաքիմիա» (3 կրեդիտ՝ 48 լսարանային և 42 արտալսարանային ժամաքանակ) առարկաների: Պակասող 1 կրեդիտը (16 ժամ լսարանային և 14 ժամ արտալսարանային) ավելացնել ի հաշիվ «Մանրէակենսաբանություն» առարկայի՝ որի կրեդիտը 6-ից դարձնել 5:

082101.006 Անտառային տնտեսություն մասնագիտության 082101.01.6 «Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում» կրթական ծրագրում «Բույսերի ֆիզիոլոգիա կենսաքիմիայի հիմունքներով» 6 կրեդիտ ունեցող առարկայի

փոխարեն ընդգրկել «Բույսերի ֆիզիոլոգիա» և «Բույսերի կենսաքիմիա» առարկաները՝ յուրաքանչյուրին հատկացնելով 3-ական կրեդիտ (90 ժամ, որից 48 ժամ լսարանային և 42 ժամ արտալսարանային պրապմունքների համար):

7.4. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ մեկ շաբաթյա ժամկետում ռեկտոր Վ. Ուռուտյանին ներկայացնել բոլոր ՄԿԾ-ում առաջարկվող փոփոխությունները:

8. ՀԱԱՀ հիմնադրամի միջին մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլաններում կատարված փոփոխությունների և սահմանված չափորոշիչներին համապատասխանեցնելու հարցի վերաբերյալ.

8.1. Հաստատել (ձայների «կողմ»՝ 44, «դեմ»՝ 0, «ձեռնպահ»՝ 1 հարաբերակցությամբ) ՀԱԱՀ հիմնադրամի միջին մասնագիտական կրթական ծրագրերի վերանայված հետևյալ ուսումնական պլանները.

- 0811.04.5 «Հողաբարելավում, հողային եվ ջրային պաշարների օգտագործում և պահպանություն»
- 0413.04.5 «Հողային ռեսուրսների կառավարում»
- 0811.05.5 «Հողաշինարարություն»
- 0414.02.5 «Ապրանքագիտություն»
- 1041.01.5 «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)»
- 0811.07.01.5 «Կրտսեր անասնաբույժ»
- 0411.01.5 «Հաշվապահական հաշվառում»
- 0412.01.5 «Ֆինանսներ» (ըստ ճյուղերի)
- 0728.08.5 «Սպառողական ապրանքների որակի փորձաքննություն»

8.2. Հաստատել ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղի 0613.02.01.5 «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտության 0613.02.5 «Վեբ-Դիզայն» որակավորման միջին մասնագիտական կրթության ուսումնական պլանը:

9. ՀԱԱՀ առկա ուսուցման մագիստրատուրայի ուսումնական գործընթացի մեկնարկի ժամկետը փոփոխելու հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ առկա ուսուցման մագիստրատուրայի ուսումնական գործընթացը սկսել սեպտեմբերի 3-րդ շաբաթից:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ